

նամակ ընդունած ըլլալը, կը խօսի առնելիքներու վրայ, կը ծանուցանէ Ալեքսիանոս վ.ը Արաբկերու առաջնորդ եպիսկոպոս ձեռնադրելը, եւ վրթանիսին կ'ըսէ թէ Ս. Աթոռը դառնայ լի արդեամբք: 6. Կոնդակ Աստուածատուր Կաթողիկոսի գրեալ ի 6 Հոկտ. 1717 առ «Խստամոլութեան նուիրակ վրդանէս Աստուածաբանութեան վ. եւ Հարազատ ս. Աթոռոյս, եւ առ վէքիլ եւ գանձապետ մահտեսի Կարապետ», որով կ'իմացընէ թէ Մեղրեցի Մարտիրոս վարդապետն, որ հինգ տարի նուիրակ էր եւ հիմայ մեռած է, ամենեւին դրամ չըկած չէ, եւ բաց ի Կարնէն նաեւ ի Կ.Պոլիս ստացուածք ունի, զայն գրաւեն եւ շրջեն:

Վրթանէս Արքեպ. 1720ին արդէն Հռոմ էր, ուր գացած է կամ Կ.Պոլսէն, կամ Էջմիածնի վրայէն, եւ թերեւս ինք տարած է այն թուղթը ի Հռոմ, որոյ մասին Ստեփ. Ռօշքա իր ժամանակագրութեան մէջ (1717) կը գրէ՝ թէ «Աստուածատուր Համատանցի ... Կաթողիկոսն Էջմիածնայ ... գոլով ուղղափառ՝ գրեաց առ Կղեմէս Փափն զթուղթ հնազանդութեան իւրոյ, եւ զմեծ գովասանս Սուրբ Եկեղեցւոյն Հռոմայ»: Այստեղ պաշտօնապէս կ'ընդունի վրթանէս Արքեպ. Կաթողիկէ հաւատքը, եւ 1721ին Կղեմէս ԺԱ. Քահանայապետէն կ'անուանուի (երկրորդ) Չեռնադրիչ Եպիսկոպոս հայ աշակերտաց Դպրատան Հռոմայ, իբրեւ յաջորդ 1721ին վախճանեալ Գրիգոր Արքեպիսկոպոսին Եդեսիոյ, որուն արդէն փոխանորդութիւն կ'ը-